ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«----» ---------- 2023թ. **N_____-Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 12-Ի Հ.856-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ կետերով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 12-ի «Վթարային շենքերի բնակիչների վերաբնակեցման աշխատանքները կազմակերպելու մասին» հ.856-Ա որոշման 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Թույլատրել Երևանի քաղաքապետին՝ համապատասխան որոշումների հիման վրա քանդման ենթակա 4-րդ կարգի վթարային Արցախի նրբանցքի հ.10 (հանրակացարանային շենք), Արցախի 4-րդ նրբանցքի հ.10 (սպորտային մասնաշենք) և Արցախի 4-րդ նրբանցքի հ.10/1 հանրակացարանային շենքերի բնակիչների հետ կնքել բնակարանների նվիրատվության, փոխանակության և/կամ/ բնակարան ձեռք բերելու համար աջակցություն ստանալու մասին պայմանագրեր, ինչպես նաև որպես նվիրատվություն ընդունել բնակարաններ (գույքեր)»:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ **ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ**

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 12-Ի Հ.856-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 37-րդ կետով սահմանված է, որ Ավագանին քաղաքապետի ներկայացմամբ որոշում է կամավոր խնդիրների լուծման նպատակով սահմանված սեփական լիազորությունների իրականացման կարգը և անհրաժեշտ ֆինանսական միջոցները, իսկ նույն օրենքի 69-րդ հոդվածի 2-րդ մասով համայնքի կամավոր խնդիրները սահմանում է համայնքի ավագանին:

Երևան քաղաքում քանդման ենթակա 4-րդ կարգի վթարային շենքերը գտնվում են փլուզման սպառնալիքի տակ, սակայն Երևան համայնքի տրամադրության տակ առկա բնակարանային ֆոնդը հնարավորություն չի ընձեռել ապահովել նշված շենքերի բնակիչների ամբողջական վերաբնակեցումը, ինչի պարագայում անկանխատեսելի հետևանքներից խուսափելու նպատակով, Երևան քաղաքի ավագանու 12.09.2023թ հ.856-Ա որոշմամբ առաջարկվել էր վերաբնակեցումը կազմակերպել բնակարանների ձեռք բերման վկայագրեր տրամադրելու միջոցով:

Երևան քաղաքի ավագանու 12.09.2023թ հ.856-Ա որոշմամբ հաստատվել էր վթարային շենքերի բնակիչների վերաբնակեցման աշխատանքները կազմակերպելու աշխատանքները, որով սահմանվել է մինչև 10.0քմ, 20.0քմ, 30.0քմ մակերեսով տարածք զբաղեցնող ընտանիքներին տրամադրել համապատասխանաբար 25քմ, 35.0քմ, 45.0քմ մակերեսով բնակարանների համար նախատեսված գնման վկայագրեր՝ 1.0քմ մակերեսի համար սահմանելով 402.000 ՀՀ դրամ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ բնակարանների գնման վկայագրերի հիման վրա քաղաքացիների կողմից բնակարաններ ձեռք բերելու գործընթացի շրջանակներում վերջիններս նոր բնակարանների նկատմամբ ձեռք են բերում սեփականության իրավունք, անհրաժեշտություն է առաջանում վերջիններիս սեփականության իրավունքով պատկանող վթարային շենքերի բնակարանները Երևան համայնքի կողմից որպես նվիրատվություն ընդունելու: Քննարկվող որոշմամբ Երևան քաղաքի ավագանին Երևանի քաղաքապետին տալիս է թույլտվություն որպես նվիրատվություն ընդունել վթարային շենքերի բնակարանները՝ հարցի վերջնական կարգավորման նպատակով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ